

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ

«ԹԷ ԻՆՉ ԳԱՏՄԵՅ ԹՐԷԲՈՆԷՄԸ»

ԳՐԻՔԻՆ ՄԱՍԻՆ

... ԲՈՒԺԱՆՆԵՐ մատենաշարի վերջին հրատարակութիւնն եղած է Տօքթ. Լ. Գրիգորեանի «Թէ ԻՆՉ պատմեց Թրէտոնէմը կամ ԻՆՉ է սիֆիլիսը, ԻՆՉպէս պաշտպանուիլ— ԻՆՉպէս դարմանուիլ» գիրքը:

Մաքուր ապագութիւնով, 54 փայլուն էջերու մէջ, հեղինակը՝ ազոտոտ ենթադրուած հիւանդութիւն մը, սիֆիլիսը ներկայացուցած է իր զանազան տարազներով և ծալքերով: Տօքթ. Գրիգորեան, որ ինձ մօտէն անձանօթ մըն է, դարուս առաջագէտ ոգիին հետեւելով, առանց վարժապետի հովերու, և մեծխօսիկ նախադասութիւններու, ձեռնհասօրէն ուսումնասիրած է իր նիւթը, ժողովրդեան բոլոր խաւերուն անկեղծօրէն օգտակար ըլլալու ջանադրութեամբ՝ պարզօրէն ցոյց տուած է անխնամ թողուած Ռիքուի, Վէլուիին աճելի աւերները, միևնոյն ժամանակ ցայտուն եռանակով մը սիֆիլիսէ չվարակուելու միջոցներն ու վարակուելէ յետոյ դարմանումի անհրաժեշտ ու անմիջապէս բժշկագիտական զէնքերը հատիկ հատիկ շարած է ընթերցողին աչքերուն առջև:

Այս գրքոյկը մէկ ծայրէն միւսը, մէկ անդամէն, մէկ շունչով, երկու ժամուան մէջ կարգացի առջի գիշեր, հաճոյքով, առանց վայրկեան մը հետաքրքրութիւնս կամ ուշադրութիւնս այլուր փոխադրելու փոքրիկ ձգտում և կամ ցանկութիւն մը զգալու:

Սիֆիլիսը իբր մարդկային ցեղը այլասերումի առաջնորդող ախտ, անբարոյականութեան ու ամօթխածութեան քօղով մը չըջապատեալ, խորհրդաւոր քստմնելի պատմութեանով զգեստաւորուած, հինէն ծանօթ է ամէնուն իբր մարդակեր պատուհաս մը զօթխատեալ, ամօթալի, խորշելի և զարշելի:

Կարգացէք Տօքթ. Լ. Գրիգորեանի սիֆիլիսը, պիտի տեսնէք թէ վստահարար տարրեր զազափար մը պիտի կազմէք այս ժանտատեսիլ ու սարսաղագիցիկ, զազանի կոչուած հիւանդութեան մասին, որ անիկա ձեզի պիտի ներկայանայ աւելի հաճոյատեսիլ, նուազ հակակրական, աստիճան մը ևս հետաքրքրութիւնը առինքնող, և չափազանցած պիտի չըլլամ եթէ աւելցնեմ թէ՝ աստիճանաբար ընթերցման հետ ձեր կարծիքը փոխելով, պիտի սիրէք այդ անբուժելի ենթադրուած յոռի համբաւի մը տէր հիւանդութիւնը, որ այսօր հլու և գլխիկոր կը զըսպուի և կը դարմանուի հիմնապէս և արմատապէս, եթէ սիֆիլիսոտը հետեւի իր բժշկին ցոյց տուած ուղղութեան:

Այս այսպէս է, քանի որ այս դարուս հազար անգամ նախընտրելի է սիֆիլիսաւոր ըլլալ, քան ենթարկուիլ հիւժախտի կամ քանսէրի

յարձակման: Այս գիրքը ուղեցոյց մըն է, որուն շնորհիւ սիֆիլիսը գաղտնի և անբուժելի հեւանդութիւններու շարքէն զատուելով ձեզ կը ներկայանայ խիստ ծանօթ սովորական խտտահարութիւն մը: Անիկա ձեզ ցոյց կու տայ ինքնապաշտպանութեան միջոցները և սիֆիլիսի ենթարկուողներուն կը մատնանշէ փրկութեան շաւիղն ու լախտը, որոշ և ապահով:

Վարդերն անգամ փուշ ունին: Եթէ ներուի, ժրաջան հեղինակին մէկ քանի հարցումի ձևով փոքրիկ դիտողութիւններ ներկայացնենք, բառերու ճշգրիտ և լաւագոյն կերպով գործածման բժախնդիր ընկերով մը հանգամանքով:

Tuberculéին «պարզ ուռ» ինչո՞ւ ըսենք: Gommeին դէմ փոխանակ խիժաւոր ուռ կամ խէժ գործածելու հոյերէն յարմարագոյն բառ մը չե՞նք կրնար գտնել:

Ինչո՞ւ գործածենք դեռ ֆրանկախոտ կամ ֆրանկախոտաւոր:

ցետագային բառը խիստ յաճախ չէ՞ք գործածած և կրկնած:

Կաղամուրթին (cuir chevelu) տեղ գլխամորթ նախընտրելի չէ՞*:

Այս անկարեւոր դիտողութիւններէն վերջ Տօքթ. Գրիգորեանի աշխատութիւնը կը մնայ, խօսքով դիւրին, գործքով դժուարին աշխատութիւն մը, յաջող ձեռնարկ մը, կամ խիստ օգտակար հրատարակութիւն մը, որով կու դայ լեցնել յայտնի և կարեւոր պակաս մը և վերոյիշեալ պատճառներով ջերմօրէն կը յանձնարարուի անխտիր ամէնուն:

Մեր յանձնարարութիւնները կը ծանրանան մասնաւորաբար սանձարձակ երիտասարդներու և շղթայագերծ օրիորդներու վրայ որոնք յաճախ օր արեւով կը նետուին անխոհմօրէն ամուսնութեան պճնազուարթ թեւերուն մէջ և կամ մեղրալուսնի հմայքէն և սեռային հաճոյքներէ ելեկտրականացած կը մղուին կեանքի հոսանքին մէջ լեղի ու կծու տառապանքներէ և արկածներէ մտրակուած: Այդ գիրքը պէտք է կարգաւ, սրտահաճոյ առաջին համբոյրներէ, «աղջիկտես»ներէ, «խօսեցեալք»ներէ և «աշխարհ զձեռն Եւայի»ներէ շատ առաջ, պատանեկութեան նախաքայլերու զարթօնքի շրջանէն սկսելով, երբ նաւուն ցռուկը դեռ անվթար ու անեղծ կը փայլի կեանքի խութեւրուն դէմ:

«ՆՈՐ ԼՈՒՐ» — ՊՈԼԻՍ

ԲԺ. Ա. Ն. ՄԵԶՊՈՒՐԿԱՆ

* 1. Ո՞րն է յարմարագոյն բառը. ուրիշներ գործածած են ՈՒՌՈՅՑ եւ ԽԻԺԱԽՈՐ ՈՒՌՈՅՑ բառերը:— 2.— ՖՐԱՆԿԱԿՍ քառօր սիֆիլիսին հետ գործածուած է, որոշ ցոյց տալու համար որ նոյն հիւանդութեան տարբեր յորջորջումներն են — 3.— ՅԵՏԱԳԱՅԻՆ քառը ամէնէն լաւ կը յատկանշէ այն սնորոշ ժամանակաշրջանը որմէ ետք կը վերբերին սիֆիլիսին վերջերը, եւ գործածուած է այնքան որքան անհրաժեշտ եղած է կրկնել:— 4.— ՄԱԶԱՄՈՐԹԻ տեղ կարելի է ըսել ՀԵՐԱՄՈՐԹ, բայց ոչ գլխամուրթ որուն մաս կը կազմեն ճակատի եւ դէմքի մօրթը: